ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2019/32

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի

Մասնակցությամբ «ԷսՋեթ ֆարմա» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝

Մ. Ավետիսյանի (լիազորագիր տրված՝ 07.03.2019թ.)

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամի լիզարված ներակայացուցիչներ՝

Պ. Գաբրիելյանի և Մ. Կարապետյանի (լիազորագիր տրված՝ 13.03.2019թ.)

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝

Ա. Սողոյանի (լիազորագիր տրված՝ 14.03.2019թ.)

Քննելով Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամի կարիքների համար բժշկական գործիքների և պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-11-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում «ԷսՋեթ ֆարմա» ՍՊԸ-ի կողմից 07.03.2019թ. ներկայացված և

11.03.2019թ. վարույթ ընդունված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/32 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «ԷսՋեթ Ֆարմա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ԷսՋեթ Ֆարմա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 07.03.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««ԷԱՃԱՊՁԲ-2019/16-11-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հանձնաժողովի /այսուհետ՝ Հանձնաժողով/ 2019թ. փետրվարի 6-ի N 1 որոշմամբ հրավեր է ներկայացվել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար՝ բժշկական գործիքների և պարագաների» ձեռքբերման նպատակով հայտարարված էլեկտրոնային աճուրդի վերաբերյալ /այսուհետ՝Հրավեր/:

Վերոնշյալ գնման հրավերի 1.1 կետով սահմանված գնման առարկայի թիվ 1-41-րդ չափաբաժիններում ապրանքների գնման աճուրդի մասնակցության համար հայտ է ներկայացրել նաև «ԷսՋեթ Ֆարմա» ՍՊԸ-ն:

25.02.2019 թվականի Հանձնաժողովի թիվ 4 արձանագրությամբ ճանաչվել են ԷԱՃԱՊՁԲ-2019/16-11-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հաղթող մասնակիցները:

Հանձնաժովի 22 փետրվարի 2019թ. ժամը 16:00 կազմվել է Հանձնաժողովի թիվ 3 արձանագրությունը՝ «ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընտրված մասնակիցների որոշման մասին:

Նույն արձանագրության 1.1. կետի համաձայն՝ ղեկավարվելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.02.2019թ. շրջաբերականի 2-րդ կետով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման ընթացակարգը գտնվում է որակավորման փուլում՝ հանձնաժողովը որոշեց «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-11-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդը շարունակել թղթային տարբերակով, իսկ 1.2. կետի համաձայն՝ առաջարկվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին երեք աշխատանքային օրվա ընթացքում

էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշներով նախատեսված փաստաթղթերը:

Ընկերությունը գտնում է, որ Հանձնաժողովի 25.02.2019 թվականի թիվ 4 արձանագրությամբ «ԷԱՃԱՊՁԲ-2019/11-16-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 1-41-րդ չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցնելու որոշումը, այնուհետև որակավորման փուլ անցնելու վերաբերյալ Հանձնաժողովի 22 փետրվարի 2019թ. ժամը 16:00 կազմված Հանձնաժողովի թիվ 3 արձանագրությունը, անհիմն է հետևյալ հիմնավորմամբ.

1.Հրավերի 7.2 կետի համաձայն՝ Էլեկտրոնային աճուրդը սկսվում է 18.02.2019թ. ժամը 09:30-ին:

2.ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ Կ. Բրուտյանի՝ պետական կառավարման մարմիններին ուղղված գրության համաձայն՝ 11.02.2019թ. ժամը 09:00-ից մինչև 19.02.2019թ.-ը ժամը 18:00 ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային աճուրդի ծրագրային ապահովման մեջ ի հայտ են եկել խնդիրներ, որոնց հետևանքով առաջացել է ֆորս-մաժորային իրավիճակ և հնարավոր չի եղել ապահովել սահմանված կարգավորումներին համապատասխան ընթացակարգերի անցկացումը, որի հիման վրա 19.02.2019թ. դրությամբ էլեկտրոնային աճուրդների համակարգի միջոցով կազմակերպված և չավարտված գնման ընթացակարգերը, որոնց հայտերի վերջնաժամկետ է սահմանված եղել վերոնշյալ ժամանակահատվածը և որոնց շրջանակներում պետք է կայանային հակադարձ աճուրդները՝ հայտարարել չեղյալ:

3.Տվյալ դեպքում էլեկտրոնային համակարգի տեխնիկական խնդիրների հետևանքով էլեկտրոնային աճուրդի հակադարձ աճուրդները 18.02.2019թ. ժամը 09:30-ից դարձել է անհնարին, որի հետևանքով «ԷսՋեթ ֆարմա» ՍՊԸ-ն զրկվել է ԷԱՃԱՊՁԲ-2019/16-11-ԵՊԲՀ ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 1-41-րդ չափաբաժիններով հակադարձ աճուրդներին մասնակցելու հնարավորությունից:

4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի օրենքում սահմանված հասկացությունների էլեկտրոնային աճուրդ՝ էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ նոր՝ նվազեցված գների ներկայացման գործընթաց, որը հնարավորություն է տալիս ավտոմատ գնահատման մեթոդներով (միջոցներով) որոշել հայտեր ներկայացրած մասնակիցների զբաղեցրած տեղերը՝ հաջորդականությունը:

5. ՀՀ էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռքբերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը հաստատելու մասին 18 մայիսի 2017 թվականի N 534-Ն ՀՀ կառավարության որոշման հավելված 1-ի 11-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «աճուրդի ընդհանուր տևողությունը սահմանվում է 30 րոպե: Աճուրդի ընթացքում կատարվող յուրաքանչյուր քայլի արդյունքում նվազեցվող գումարը չպետք է պակաս լինի աճուրդն սկսելու պահին ներկայացված նվազագույն գնային առաջարկի մեկ տոկոսից: Եթե աճուրդի ընդհանուր տևողության ընթացքում որևէ քայլ կատարելու պահից հաշված 5-րդ րոպեն լրանալը չի կատարվում նոր քայլ, ապա աճուրդը համարվում է ամփոփված, և վերջին քայլը կատարած մասնակիցը համարվում է առաջին տեղն զբաղեցրած մասնակից:

Ընկերությունը խնդրել է, հիմք ընդունելով վերոգրյալ փաստական և իրավական հիմնավորումները և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածով, պարտավորեցնել հանձնաժողովին «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-11-ԵՊԲՀ» ծածկագրով «ԵՊԲՀ կարիքների համար բժշկական գործիքների և պարագաների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-11-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդը 1-41-րդ չափաբաժիններով հայտարարել չկայացած:

Ընկերությունը, ի լրումն ներկայացված բողոքի, գրությամբ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել 25.02.2019թ. ՀՀ ֆինանսների նախարարության գրությունը ուղղված Ընկերությանը:

Ընկերությունը վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 25.02.2019թ. գրությամբ հիմնավորվում է այն փաստական հանգամանքը, որ 18.02.2019թ. ժամը 09:30-ին կազմակերպված «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-11-ԵՊԲՀ» ծածկագրով հակադարձ աճուրդներին «ԷսՋեթ Ֆարմա» ՍՊԸ-ն հնարավորություն չի ունեցել մասնակցել:

«ԷսՋեթ Ֆարմա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.03.2019թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

3.«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված միջնորդությամբ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 14.03.2019թ. միջանկյալ որոշմամբ ԳԲՔԱ-ԱՄ-2019/32 բողոքով ներգրավվել է որպես երրորդ կողմ:

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի լիազորված ներկայացուցիչը, մասնակցելով բողոքի քննության նպատակով 14.03.2019թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստին, հայտնել է, որ «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն մասնակցել է «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-11-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին և Ընկերությունը հետևել է հակադարձ աճուրդի ամբողջ ընթացքին, որը տեղի է ունեցել 18.02.2019թ. ժամը 09:30-ից ժամը 12:30-ը ընկած ժամանակահատվածում և որպես նվազագույն առաջարկ ներկայացրած մասնակից սպասել է աճուրդի մյուս մասնակիցների քայլին, սակայն այդ ընթաքում ոչ մի մասնակից քայլ չի արել և աճուրդը ամփոփվել է, որի արդյունքում «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն աճուրդի 1-41-րդ չափաբաժիններով ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

Ամփոփելով, «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի լիազորված ներկայացուցիչը հայտնել է, որ իր կարծիքով eauction համակարգում տեխնիկական խնդիրներ առկա չեն եղել:

4.Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամը 13.03.2019թ. թիվ 09/295 գրությամբ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով «ԷսՋեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կողմից 07.03.2019թ. ներկայացված բողոքը, ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալի 22.02.2019թ. շրջաբերականը, ինչպես նաև «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-11-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգը, գտնում

է որ՝ «ԷսՀեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը անհիմն է և ենթակա է մերժման, հաշվի առնելով ստորև ներկայացված հիմնավորումները և պարզաբանումները՝

ԷԱՃԱՊՁԲ-2019/16-11-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգը մեկնարկել է eauction.armeps.am էլեկտրոնային աճուրդի համակարգով:

ԷԱՃԱՊՁԲ-2019/16-11-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը հրապարակվել է 07.02.2019թ.:

ԷԱՃԱՊՁԲ-2019/16-11-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել՝ 14.02.2019թ. ժամը 09:30:

ԷԱՃԱՊՁԲ-2019/16-11-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հակադարձ աճուրդի ժամանակացույցը ծանուցվել է՝ 14.02.2019թ: Պատվիրատուն և մասնակիցները պատշաճ ծանուցված են եղել աճուրդի ժամանակացույցի մասին /կից ներկայացվում է աճուրդիժամանակացույցի պատճենը/:

ԷԱՃԱՊՁԲ-2019/16-11-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հակադարձ աճուրդը մեկնարկել է 18.02.2019թ. ժամը՝ 9:30-ին, և շարունակվել է մինչև 18.02.2019թ. ժամը՝ 12:30-ն:

ԷԱՃԱՊՁԲ-2019/16-11-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգը 19.02.2019թ. դրությամբ գտնվել է որակավորման փուլում:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, հանդիսանալով գնումների ոլորտը կարգավորող լիազոր մարմին, ուսումնասիրելով ստեղծված իրավիճակը, սույն թվականի փետրվարի 22-ին, պաշտոնապես շրջանառել է գրություն՝ էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով գնումներ իրականացնող պատվիրատուների կողմից սկսված և չավարտված ընթացակարգերի շրջանակներում հետագա քայլերի վերաբերյալ, ելնելով ընթացակարգերի կարգավիճակներից:

2.1 Գրությամբ մասնավորպես նշված է՝ 11/02/2019թ. ժամը 09:00-ից մինչև 19/02/2019թ. ժամը 18:00-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային աճուրդի ծրագրային ապահովման մեջ ի հայտ են եկել խնդիրներ: Նշվածը ոչ մի կերպ չի կարող նշանակել, որ համակարգը չի գործել ընդհանրապես, և որ մասնակիցները ընդհանրապես հնարավորություն չեն ստացել սակարկելու գնային առաջարկները: Եթե

մասնակիցը սկսած 18.02.2019թ. 09:30-12:30 ընկած ժամանակահատվածում չի սակարկել բողոքի առարկա դարձած թվով 41 չափաբաժնով սահմանված ապրանքների գնային առաջարկներից ոչ մեկը, դա դեռ չի հիմնավորում վերջինիս կողմից գնային առաջարկները սակարկելու անհնարինությունը:

2.2 Համաձայն նույն գրության՝

1/ 19/02/2019թ. դրությամբ էլեկտրոնային աճուրդների համակարգի միջոցով կազմակերպված և չավարտված գնման ընթացակարգերը, որոնց հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված եղել վերոնշյալ ժամանակահատվածը և որոնց շրջանակներում պետք է կայանային հակադարձ աճուրդները՝ հայտարարել չեղյալ: Հայտնում ենք Ձեզ, որ ԷԱՃԱՊՁԲ-2019/16-11-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի հակադարձ աճուրդը ամփոփված է, ուստի կայացած է:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. թիվ 534-Ն որոշման 11-րդ կետի 2-րդ պարբերության՝ աճուրդի ընդհանուր տևողությունը սահմանվում է 30 րոպե: Աճուրդի ընթացքում կատարվող յուրաքանչյուր քայլի արդյունքում նվազեցվող գումարը չպետք է պակաս լինի աճուրդն սկսելու պահին ներկայացված նվազագույն գնային առաջարկի մեկ տոկոսից: Եթե աճուրդի ընդհանուր տևողության ընթացքում որևէ քայլ կատարելու պահից հաշված 5-րդ րոպեն լրանալը չի կատարվում նոր քայլ, ապա աճուրդը համարվում է ամփոփված, և վերջին քայլը կատարած մասնակիցը համարվում է առաջին տեղն զբաղեցրած մասնակից.

2/ այն գնման ընթացակարգերը, որոնք գտնվում են որակավորման կամ որակավորման շտկման, անգործության կամ պայմանագրի կնքման փուլում՝ անհրաժեշտ է շարունակել թղթային տարբերակով:

Պատվիրատուն հայտնել է, որ 19.02.2019թ. դրությամբ ԷԱՃԱՊՁԲ-2019/16-11-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգը ստացել է որակավորման կարգավիճակ:

Հակադարձ աճուրդի ամփոփման օրը՝ 18.02.2019թ., ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության 22.02.2019թ. շրջաբերականը ստանալուն պես, ԷԱՃԱՊՁԲ-2019/16-11-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 18.02.2019թ. նիստում արձանագրվել են՝ հակադարձ աճուրդի ամփոփումը և կայացումը,

մասնակիցների դիմում-հայտարարությունների համապատասխանությունը, առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցները:

22.02.2019թ. նիստում որոշվել է՝ ընթացակարգը շարունակել թղթային տարբերակով, հիմք՝ 18.02.2019թ. ամփոփված և կայացած հակադարձ աճուրդի առկայություն, առաջին տեղ զբաղեցնող մասնակիցների առկայություն, 19.02.2019թ. դրությամբ ընթացակարգի որակավորման կարգավիճակի առկայություն:

25.02.2019թ. նիստում կայացվել է ընթացակարգի շրջանակներում 1-41-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակիցներ ճանաչելու որոշումը, հիմք՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացված որակավորման փաստաթղթերի համապատասխանություն, ՊԵԿ-ի կողմից տրամադրված դրական եզրակացություն:

Պատվիրատուն հայտնել է, որ «ԷսՋեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի բավարարման պահանջով խախտվում են «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի շահերը: Գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

ԷԱՃԱՊՁԲ-2019/16-11-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների կարիքը չի որոշվում միայն հաշվի առնելով գնման առարկաների օգտագործման ոլորտը, անվանումները, տեխնիկական բնութագրերը, ձեռք բերման արժեքը, այլ նաև հաշվի առնելով գնման ժամանակացույցը: Անհրաժեշտ ապրանքատեսակները նախատեսված են համաշխարհային բանկի ծրագրի շրջանակներում նորաբաց սիմուլիացիոն կենտրոնի գործունեության, մասնավորապես ուսումնական պրոցեսի մեկնարկի համար, որը նախատեսված է 2019թ. գարնանը:

Ուշագրավ են նաև հետևյալ փաստերը՝

«ԷսԶեթ Ֆարմա» ՍՊԸ-ն հանդիսանալով ԷԱՃԱՊՁԲ-2019/16-11-ԵՊԲՀ ծածկագրով էլեկտրոնային աճուրդի մասնակից, պատշաճ ծանուցված լինելով ԷԱՃԱՊՁԲ-2019/16-11-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.02.2019թ. և 25.02.2019թ. նիստերի արձանագրությունների մասին, բողոք է ներկայացրել սահմանված անգործության ժամկետի վերջին օրը՝ ընտրված մասնակից ճանաչելու օրվանից հաշված 10 օրացուցային օր հետո:

«ԷսԶեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կողմից 1-41-րդ չափաբաժինների մասով ներկայացված գնային առաջարկները գերազանցում են նույն ընթացակարգի շրջանակներում նույն 1-41-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած ընկերության գնային առաջարկները առնվազն 20 տոկոսով:

ԷԱՃԱՊՁԲ-2019/16-11-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում գնման առարկա են հանդիսանում «Nissin Dental» ապրանքային նշանի ստոմատոլոգիական սարքավորումների շահագործման համար անհրաժեշտ օրիգինալ պահեստամասեր և ծախսանյութեր: «Nissin Dental» ապրանքային նշանի ստոմատոլոգիական սարքավորումները ձեռք են բերվել համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ և ծրագրի շրջանակներում՝ 2017 թվականին: Գնումն իրականացվել է միջազգային մրցույթով, համաձայն ՀԲ-ի ուղեցույցի:

ԷԱՃԱՊՁԲ-2019/16-11-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի ամփոփումից հետո՝ սույն թվականի մարտի 4-ին՝ «ԷսԶեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կողմից, համալսարանի ռեկտորի անունով ներկայացվել է պարզաբանման պահանջ: Գրությամբ մասնավորապես նշվում է, որ «ԷսԶեթ Ֆարմա» ՍՊԸ-ի և համալսարանի միջև 2014թ. կնքվել է «Nissin Dental» ապրանքային նշանի սարքավորումների մատակարարման պայմանագիր, և ֆինանսական միջոցներ չնախատեսվելու հետևանքով պայմանագիրը լուծվել է, իսկ ապրանքները հետևաբար չեն մատակարարվել: Քանի որ, ԷԱՃԱՊՁԲ-2019/16-11-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել «Nissin Dental» մոդելների համար նախատեսված բաղկացուցիչ մասեր, եզրակացնում ենք, որ «Nissin Dental» մոդելների սարքավորումները առկա են համալսարանում: Խնդրում ենք տալ պարզաբանում, թե որ մրցույթով է ձեռք բերել համալսարանը վերոնշյալ սարքերը:

Պատվիրատուն նշել է, որ հաշվի առնելով ներկայացված փաստերը, գտնում է որ, սույն ընթացակարգի շրջանակներում «ԷսՋեթ Ֆարմա» ՍՊԸ-ի շահերը չեն խախտվել, իսկ վերջինս օգտվելով գնումների ոլորտում ստեղծված իրավիճակից, Պատվիրատուի համար անհայտ պատճառներով, փորձում է չեղարկել և տապալել համալսարանի կողմից օրինական ճանապարհով իրականացված խիստ անհրաժեշտ ապրանքների գնման գործընթացը և համապատասխանաբար նաև պետական բժշկական համալսարանի ուսումնական պրոցեսը:

Պատվիրատուն խնդրել է հաշվի առնելով վերոգրյալը, ներկայացված փաստերը և հիմնավորումները, և այն հանգամանքը, որ ուսումնական պրոցեսը պատշաճ իրականացնելու նպատակով Պատվիրատուի մոտ առկա է բողոքի առարկա հանդիսացող չափաբաժիններով սահմանված ապրանքատեսակների անհետաձգելի պահանջ, «ԷսՋեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մերժել»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.03.2019թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

5. ԳԲՔԱ-ԱՄ-2019/32 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ԱՄ-2019/32 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից ԵՊԲՀ կարիքների համար բժշկական գործիքների և պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-11-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Աճուրդ):

2. Աճուրդի հրավերի համաձայն՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված 14.02.2019թ. ժամը 09:30-ը:

3. Աճուրդին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «ԷսԶեթ Ֆարմա» ՍՊԸ-ն և «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ն:

4. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 18.02.2019թ. ժամը 15:30-ի նիստի թիվ 2 արձանագրության 1.1 ենթակետի համաձայն՝ հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով աճուրդների իրականացումն ապահովող համակարգի՝ www.eauction.armeps.am կայքի միջոցով 2019թ. փետրվարի 14-ին ժամը 09:30-ին:

5. Նույն արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ (Հավելված N 2) Աճուրդի 1-41-րդ չափաբաժիններով «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

6. Աճուրդի գնահատող հանձնաժողովը 22.02.2019թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով արձանագրել է, որ ղեկավարվելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.02.2019թ. շրջաբերականի 2-րդ կետով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման ընթացակարգը գտնվում է որակավորման փուլում՝ հանձնաժողովը որոշեց աճուրդը շարունակել թղթային տարբերակով:

7. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 25.02.2019թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Աճուրդի 1-41-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչվել «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ն:

8. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ որոշվել է անգործության ժամկետը լրանալուց հետո «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի հետ կնքել պայմանագիր:

6. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով «ԷսԶեթ ֆարմա» ՍՊԸ-ի 07.03.2019թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամի 13.03.2019թ. թիվ 09/295 գրությունը ՝ կից փաստաթղթերով, «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի դիրքորոշումը,

ՀՀ ֆինանսների նախարարության 22.02.2019թ. գրությունը, «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-11-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, կամ

2) այն մասնակցին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է: Այս մեթոդի կիրառման դեպքում հայտերը գնահատելիս հրավերով սահմանված դեպքերում և կարգով, առաջարկվող գնից բացի, հաշվի են առնվում ոչ գնային այլ չափանիշներ: Ոչ

գնային չափանիշները պետք է փոխկապակցված լինեն պայմանագրի առարկայի հետ և դրանց հարաբերական կշիռները ներկայացվեն հրավերի մեջ:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 11-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ աճուրդի ընդհանուր տևողությունը սահմանվում է 30 րոպե: Աճուրդի ընթացքում կատարվող յուրաքանչյուր քայլի արդյունքում նվազեցվող գումարը չպետք է պակաս լինի աճուրդն սկսելու պահին ներկայացված նվազագույն գնային առաջարկի մեկ տոկոսից: Եթե աճուրդի ընդհանուր տևողության ընթացքում որևէ քայլ կատարելու պահից հաշված 5-րդ րոպեն լրանալը չի կատարվում նոր քայլ, ապա աճուրդը համարվում է ամփոփված, և վերջին քայլը կատարած մասնակիցը համարվում է առաջին տեղն զբաղեցրած մասնակից:

Կարգի 13-րդ կետի համաձայն՝ աճուրդն սկսվում է հայտերը ներկայացնելու ժամկետը լրանալու օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրը՝ հրավերով սահմանված ժամին:

Կարգի 15-րդ կետի համաձայն՝ մինչև աճուրդի ամփոփման համար հրավերով սահմանված ժամկետը լրանալը՝ համակարգն ավտոմատ եղանակով մասնակիցներին ներկայացնում է յուրաքանչյուր մասնակցի քայլը և այն կատարելու օրը, ժամը:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ աճուրդն ամփոփվում է հրավերում նշված կոնկրետ ժամը լրանալու դրությամբ կամ սույն կարգի 11-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում:

Այսպիսով, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամ»-ի կողմից ԵՊԲՀ կարիքների համար բժշկական գործիքների և պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-11-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ:

Աճուրդի հրավերի համաձայն՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված ***14.02.2019թ. ժամը 09:30-ը:***

Հակադարձ աճուրդը մեկնարկել է 18.02.2019թ. ժամը՝ 09:30-ին:

Աճուրդին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «ԷսՋեթ Ֆարմա» ՍՊԸ-ն և «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ն:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 18.02.2019թ. ժամը 15:30-ի նիստի թիվ 2 արձանագրության 1.1 ենթակետի համաձայն՝ հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով աճուրդների իրականացումն ապահովող համակարգի՝ www.eauction.armeps.am կայքի միջոցով 2019թ. փետրվարի 14-ին ժամը 09:30-ին:

Նույն արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ (Հավելված N 2) Աճուրդի 1-41-րդ չափաբաժիններով «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

Աճուրդի գնահատող հանձնաժողովը 22.02.2019թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով արձանագրել է, որ ղեկավարվելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.02.2019թ. շրջաբերականի 2-րդ կետով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման ընթացակարգը գտնվում է որակավորման փուլում՝ հանձնաժողովը որոշեց աճուրդը շարունակել թղթային տարբերակով:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 25.02.2019թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Աճուրդի 1-41-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչվել «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ն:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ որոշվել է անգործության ժամկետը լրանալուց հետո «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի հետ կնքել պայմանագիր:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 22.02.2019թ. պատվիրատուներին ուղղված շրջաբերականով հայտնել է, որ 11.02.2019թ. ժամը 09:00-ից մինչև 19.02.2019թ. ժամը 18:00-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային աճուրդի ծրագրային ապահովման մեջ ի հայտ են եկել խնդիրներ, որոնց հետևանքով մի շարք կազմակերպություններ չեն կարողացել մասնակցության հայտ ներկայացնել գնման ընթացակարգերին, մասնակցել հակադարձ աճուրդներին, ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր և այլ: Ծրագրում առաջացած խնդիրների արդյունքում ստեղծվել է ֆորս մաժորային իրավիճակ և հնարավոր չէ ապահովել սահմանված կարգավորումներին համապատասխան ընթացակարգերի անցկացումը:

Վերոհիշյալ գրության 1-ին կետի համաձայն՝ **19.02.2019թ. դրությամբ էլեկտրոնային աճուրդների համակարգի միջոցով կազմակերպված և չավարտված գնման ընթացակարգերը, որոնց հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված**

<u>եղել վերոնշյալ ժամանակահատվածը և որոնց շրջանակներում պետք է կայանային հակադարձ աճուրդները՝ հայտարարել չեղյալ:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 4-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանվում է, որ ***էլեկտրոնային աճուրը էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ նոր՝ նվազեցված գները ներկայացնելու գործընթաց է, որը հնարավորություն է տալիս ավտոմատ գնահատման մեթոդներով (միջոցներով) որոշելու հայտեր ներկայացրած մասնակիցների զբաղեցրած տեղերը՝ հաջորդականությունը***:

Կարգի 11-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանվում է, որ աճուրդի ընդհանուր տևողությունը սահմանվում է 30 րոպե: ***Եթե աճուրդի ընդհանուր տևողության ընթացքում որևէ քայլ կատարելու պահից հաշված 5-րդ րոպեն լրանալը չի կատարվում նոր քայլ, ապա աճուրդը համարվում է ամփոփված***, և վերջին քայլը կատարած մասնակիցը համարվում է առաջին տեղն զբաղեցրած մասնակից:

Կարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով սահմանվում է, որ ***<u>քայլը՝ մինչև էլեկտրոնային աճուրդի ամփոփումը՝ մասնակցի կողմից վերանայված և ներկայացված նոր՝ նվազեցված գնային առաջարկն է:</u>***

Ուսումնասիրելով «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամ»-ի կարիքների համար բժշկական գործիքների և պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-11-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի իրականացման ընթացքն, արձանագրում եմ, որ աճուրդին մասնակցել են «ԷսՋեթ Ֆարմա» ՍՊԸ-ն և «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ն, որոնց կողմից ներկայացված նախաաճուրդային և վերջնական առաջարկները աճուրդի 1-41-րդ չափաբաժինների մասով համաձայն՝ աճուրդի գնահատող հանձնաժողովի 18.02.2019թ. ժամը 15:30-ի նիստի թիվ 2 արձանագրության N 1 հավելվածի նույնական

են, ինչով պայմանավորված կարելի է փաստել, որ աճուրդի մասնակիցների կողմից աճուրդի ընդհանուր տևողության ընթացքում որևէ քայլ՝ ուղղված գների նվազեցմանը չի կատարվել, որի արդյունքում համակարգի կողմից հիմք է ընդունվել մասնակիցների կողմից ներկայացված նախնական գնային առաջարկները և որոշվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով, արձանագրում եմ, որ eauction համակարգում առաջացած տեխնիկական խնդիրների հետևանքով խախտվել է «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-11-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդը ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգով սահմանված պահանջների պահպանմամբ անցկացնելու և իրականացնելու ընթացքն, որի արդյունքում գների նվազեցում տեղի չի ունեցել:

Միաժամանակ արձանագրում եմ, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը 22.02.2019թ. պատվիրատուներին ուղղված շրջաբերականով հայտնել է, որ 11.02.2019թ. ժամը 09:00-ից մինչև 19.02.2019թ. ժամը 18:00-ն ընկած ժամանակահատվածում առկա տեխնիկական խնդիրների պատճառով 19.02.2019թ. դրությամբ էլեկտրոնային աճուրդների համակարգի միջոցով կազմակերպված և չավարտված գնման ընթացակարգերը, որոնց ***հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված եղել վերոնշյալ ժամանակահատվածը և որոնց շրջանակներում պետք է կայանային հակադարձ աճուրդները՝ <u>հայտարարել չեղյալ</u>***:

Վերոգրյալով պայմանավորված, արձանագրում եմ, որ «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-11-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է եղել ***14.02.2019թ. ժամը 09:30-ը,*** որը համընկնում է ՀՀ ֆինանսների նախարարության 22.02.2019թ. շրջաբերականում նշված ժամանակահատվածի հետ:

Այսպիսով, հաշվի առնելով գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, ոչ խտրական հիմունքներով կազմակերպելու, միաժամանակ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացնելու անհրաժեշտությունը և հիմք ընդունելով Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի

պահանջները, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության 22.02.2019թ. շրջաբերականը, գտնում եմ, որ «ԷսԶեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ԷսԶեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կողմից 07.03.2019թ. ներկայացված բողոքը բավարարել, մասնավորապես՝ պարտավորեցնել «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-11-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին աճուրդը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ